ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2019/20ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

| | **Կրթականծրագիրը** | **Ընդունելությանքննությունները** | | | **Ընդունելությանտեղ/այդթվում** | | | | **ուսման վարձը հազ. դրամ** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մրցութային | | Ոչ մրցութային | անվճար | այդ թվում | | վճարովի ԱՏ | |
| | | | | | | բզ | նպտ. | | |
| | **ՀԱՊՀԿապանիմասնաճյուղ** | | | | **14** | **1** | | **46** | |
| 1 | Տնտեսագիտություն | Մ(գ) | Ֆ(գ)** | Հլգ(գ)* | 3 | | | 13 | 450 |
| 2 | Տեղեկատվական համակարգեր | Մ(գ) | Ֆ(գ)** | Հլգ(գ)* | 3 | | | 13 | 450 |
| 3 | Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում | Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Ք(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** կամ Ք(գ)** | Հլգ(գ)* | 4 | 1 | | 12 | 390 |
| 4 | Մետալուրգիա | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 4 | | | 8 | 390 |

1. <u>**Բուհում ընդունելության դիմում-հայտի լրացման և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**</u>

   ա) <u>Մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը</u> (մինչև ժամը 18:00) ընկած ժամանակահատվածում իրենց փաստաթղթերն են բուհ ներկայացնում և բուհում ընդունելության դիմում-հայտ լրացնում՝

- հանրակրթական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների նախորդ տարվա (տարիների) շրջանավարտները,
- նախորդ տարի զորացրված դիմորդները:

   բ) <u>Հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը</u> (մինչև ժամը 18:00) ընկած ժամանակահատվածում իրենց փաստաթղթերն են բուհ ներկայացնում և բուհում ընդունելության դիմում-հայտ լրացնում՝

- ՀՀ երկքաղաքացի դիմորդները,
- այլ պետության քաղաքացիություն ունեցող դիմորդները,
- օտարերկրյա ուսումնական հաստատությունները այս ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացի դիմորդներ,
- սույն թվի գարնանային զորացրումից զորացրված դիմորդները,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները:

2. **Դիմորդների կողմից դիմում-հայտի հետ միասին ներկայացվող փաստաթղթերը**՝

- լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից(նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ատեստատ կամ դիպլոմ),
- 6լուսանկար (3x4 չափսի),
- Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյանվկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում ՀՀ ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,
- փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին(զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում,իսկ
- նախկին ում առողջական վիճակի կապակցությամ բտարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),
- զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցած լինելու, ծառայության վայրի և ծառայողական բնութագրի մասին:
- փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Մասնաճյուղի փաստաթղթեր ընդունող հանձնաժողովը պատրաստ է օգնելու և մանրամասն տեղեկատվություն տալու դիմորդներին ընդունելության կարգի, փաստաթղթերի ընդունման և դիմում-հայտերի լրացման վերաբերյալ:

Անհրաժեշտ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև կայքի **«ԴԻՄՈՐԴ»** բաժնից կամ դիմել ՀԱՊՀ
Կապանի մասնաճյուղ՝ Բաղաբերդ 28: Հեռախոս՝ 5-46-80; 5-34-61; 093-15-00-26:

Կից ներկայացված է նաև ընդունելության փաստաթղթերի ընդունման համար բանկում կատարվելիք վճարման կտրոնը:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ